ԱՂՈԹՔ ՄԱՀՎԱՆԻՑ ԱՌԱՋ

Բարերար Տեր, ինձ բարի հրեշտակի հանձնիր, հոգիս քաղցրությամբ ավանդելու համար, և անխռով անցկացրու գևերի չարությունից, որոնք գտնվում են երկնքի ներքո: Եվ արժանացրո՛ւ հոգիս Քո կանչի օրը ուրախությամբ տեսնել փառքիդ Լույսը և հանգչել արդարների օթևանում:

ԱՄԵՆ:

32

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Պարգևիչ ողորմության, պարգևիր և ինձ ուղղափառ հավատքով բարի գործերով և Քո սուրբ մարմնի և արյան հաղորդությամբ գալ դեպի Քեզ:

Գոհանում ենք Քեզանից Քրիստոս Թագավոր մեր, որ կենարար Մարմնովդ և սուրբ Արյունովդ մեզ կենդանություն պարգևեցիր: ԱՄԵՆ:

26

ԱՂՈԹՔ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՆ

Քո առջև ենք ընկնում Սուրբ Աստվածածին, և աղաչում անարատ Կույսիդ՝ բարեխոսի՛ր մեր անձերի համար և աղաչիր Միածին Որդուդ փրկել մեզ փորձություններից, ու հոգու և մարմին բոլոր վտանգներից: ԱՄԵՆ:

20

Հայր մեր որ երկնքում ես. սուրբ թող լինի անունը Քո. թող Քո արքայությունը գա. թող Քո կամքը լինի երկրի վրա ինչպես որ երկնքում է. մեր հանապազորյա հացը մեզ տո՛ւր մեզ այսօր. և ների՛ր մեզ մեր հանցանքները, ինչպես որ մենք ենք ներում նրանց, որ հանցանք են գործում մեր դեմ, և մի՛ տանիր մեզ փորձության, այլ փրկի՛ր չարից, որովհետև Քո՛նն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս հավիտենից: ԱՄԵՆ:

1

ԱՂՈԹՔ ԳՈՐԾ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Աստված իմ, որ բացում ես ձեռքերդ և լցնում բոլոր արարածներին Քո ողորմությամբ, Քեզ եմ վստահում իմ անձը (և այս գործը)*: Դու հոգա և պատրաստիր հոգուս և մարմնիս բոլոր կարիքները, այսուհետև մինչև հավիտյան:* ԱՄԵՆ:

7

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ

Օգնի՛ր մեզ Տեր, օգնի՛ր մեզ, Աստված Փրկիչ մեր, Քո անվան մեծ փառքի համար, Տե՛ր փրկիր մեզ, և քավիր մեր մեղքերը: Պարսպած պահի՛ր Քեզ հուսացող ժողովրդին, հաղթող և պատվական Խաչիդ հովանու ներքո՝ խաղաղությանդ մեջ: ԱՄԵՆ:

13

ՓԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Փա՛ռք Քեզ Աստված մեր, փա՛ռք Քեզ, ամեն բանի համար Տեր, փա՛ռք Քեզ: Փա՛ռք տվեք Աստծուն, օրհնեցե՛ք մարդասեր և հավիտենական Թագավորին, որ փրկում և ապրեցնում է Իր ծառաներին: Դո՛ւ ես մեր Փրկիչը՝ Քրիստոս Աստված, հիմա մեր հոգիները օրհնում և փառաբանում են Քեզ: ԱՄԵՆ:

30

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Գաղանիքնե՛ր քննող, մեղա՛ Քեզ կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, թողություն չնորհիր մեղավորիս, քանզի սուրբ Ավազանի ծնունդից մինչև այսօր մեղանչել եմ Աստվածությանդ առաջ իմ զգայարաններով և մարմնիս բոլոր անդամներով: ԱՄԵՆ:

24

ԵՐԵԿՈՅԱՆ ԱՂՈԹՔ

Գոհանում եմ քեզանով, Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ և օրհնում ու փառավորում Քո սուրբ Անունը, որ պահպանեցիր Քո անարժան և մեղավոր ծառային այս ցերեկ ու խաղաղությամբ հասցրեցիր երեկոյան ժամին: Այժմ խնդրում եմ, որպեսզի Դու Քո ամենազոր աջով կնքես Քո ծառայի տեղն ու հարկը, ելքն ու մուտքը, որ ննջեմ ապահով և աներկյուղ, խաղաղությամբ և առանց փորձանքների: ԱՄԵՆ:

3

ՏՈՒՆ ԴԱՐՁԻ ԱՂՈԹՔ

Օրհնյալ Տեր, աղաչում և խնդրում ենք Քեզանից. ճանապարհակից եղիր մեղավոր ծառայիդ, և Քո հսկողությամբ առաջնորդիր խաղաղությամբ վերադառնալու մեր բնակավայրը՝ Տեր Հիսուս Քրիստոսի օգնությամբ, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից: ԱՄԵՆ:

9

ՀՈՒՅՍԻ ԵՎ ՄԽԻԹԱՐՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

Տե՛ր իմ, քաջալերիր ինձ նեղությանս մեջ, մխիթարի՛ր վշտերիս մեջ, ու արժանի դարձրու ինձ Տե՛ր իմ և Աստված իմ՝ Հիսուս Քրիստոս, խաչակից լինել Քեզ մինչև ի մահ, հրաժարվելով այս աշխարհի հեշտություններից և դասակից լինել Քո երանելիներին ու դրախտում անմահ կյանք վայելեմ: ԱՄԵՆ:

15

ԱՂՈԹՔ ՉԱՐ ԱՉՔԻ ԵՎ ՉԱՐ ԼԵԶՎԻ ԴԵՄ

Տե՛ր Աստված, մարդասեր Հոր Որդի, Դու որ օգնական և պահապան ես Քեզ հուսացողներին, գթա՛ Քո արարչական ողորմությամբ, և մեզ, անփորձ ու անսայթաք պահիր սատանայի որոգայթներից: Փրկի՛ր և պահի՛ր Քո ծառայիդ՝ չար աչքից, չար լեզվից և ամենայն երևելի ու աներևույթ դիվական պիղծ հնարքներից: ԱՄԵՆ:

28

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍԻ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՆ

Երկնավոր Թագավորի սուրբ զորապետ, Անմահի սիրով աշխարհին խաչված սուրբդ Սարգիս՝ պսակված Տիրոջ հաղթող Խաչով, մեր անձերի փրկության համար բարեխոս եղիր մեր Տեր Հիսուս Քրիստոսի մոտ, որին վայել է փառք իշխանություն և պատիվ, այժմ և միշտ հավիտյանս հավիտենից: ԱՄԵՆ:

22

ՊԱՀՏԱՄՈՒՆՔԻ ԱՂՈԹՔ

Տեր երկնքի և երկրի, Արարիչ բոլոր արարածների, չնորհի՛ր մեզ միշտ երկյուղով Քեզ պաշտել ու սիրել Քեզ ամբողջ սրտով, բովանդակ մտքով, և մեր ողջ զորությամբ պահել Քո պատվիրանները ու մեր ձեռքերը հավատքով Քեզ բարձրացնելով՝ Քեզանից չնորհ և ողորմություն ստանանք: ԱՄԵՆ:

16

ԱՂՈԹՔ ՃԱՇԱԿԵԼՈՒՑ ԱՌԱՋ

[Նախ սկսում են տերունական աղոթքով, և ապա սեղանն օրհնողը ասում է.]

Խաղաղությամբ ճաշակենք այս կերակուրները, որոնք մեզ համար պատրաստված են Տիրոջ կողմից, օրհնյալ է Տերն Իր պարգևներով: ԱՄԵՆ:

5

ԱՂՈԹՔ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՈՐՔԻՆ

Միքայե՛լ և Գաբրիե՛լ վերին զորքերի դասերի պետե՛ր, որ անլռելի ձայնով փառաբանություն եք մատուցում Ամենասուրբը Երրորդությանը և երեքսրբյան ձայնով երգելով ասում. «Ողորմի՛ր, Տե՛ր, Դու ստեղծեցիր, կորստյան մի՛ մատնիր, Քո ձեռքի գործը, մի՛ անտեսիր», օգնական և պահապան եղեք ԱՍՏՈՒԾՈ ծառայիդ. (հիշատակել անունը ում համար, որ աղոթում եք...) ԱՄԵՆ:

11

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԵՐԿՅՈՒՂԻ

Ամենախնամ Տեր, Քո սուրբը երկյուղը պահապան դիր իմ աչքերին՝ որ չնայեն պագշոտությամբ, և իմ ականջներին՝ որ չխորժեն լսել չարության խոսքեր, և իմ բերանին՝ որ սուտ չխոսի, և իմ սրտին՝ որ չարը չխորհի, և իմ ձեռքերին՝ որ չգործեն անիրավություն, և իմ ոտքերին՝ որ չգնան անօրեն ճանապարհով: ԱՄԵՆ:

17

ԱՂՈԹՔ ՓՐԿՈՒԹՅԱՆ

Տե՛ր Աստված՝ գթության և փրկության, ողորմության և քավության, նորոգության, բժշկության և առողջության, լուսավորության և կենդանության, հարության և անմահության, որ մերձ ես համայն արարածների հեծություններին, ինձ էլ հիշի՛ր, երբ գաս Քո արքայությամբ: ԱՄԵՆ:

14

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹՔ

Բարերար Տեր, նայի՛ր ողորմությամբ Քեզ երկրպագողիս և Քո սուրբ Անունը փառաբանողիս: Տե՛ր զորության՝ հանդարտեցրու հոգիս սատանայական բոլոր խռովություններից և աշխարհիկ հոգսերից: Առաքի՛ր Քո խաղաղության հրեշտակին, որ մեզ անխռով պահի գիշեր և ցերեկ, քնած թե արթուն, որպեսզի միշտ գոհությամբ փառավորենք Քեզ: ԱՄԵՆ:

19

ՊԱՀՊԱՆԻՉ ԱՂՈԹՔ

Թագավոր խաղաղության, մեր անձերի Փրկիչ՝ Քրիստոս Աստված մեր, պարսպած պահի՛ր Քո ժողովրդին, սուրբ և պատվական Խաչիդ հովանու ներքո՝ խաղաղությանդ մեջ, փրկի՛ր տեսանելի և անտեսանելի թշնամուց, և արժանի արա գոհությամբ Քեզ փառավորելու՝ Հոր և Սուրբ Հոգու հետ. այժմ և հավիտյաններում: ԱՄԵՆ:

12

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ԲԱՐԵԽՈՍՈՒԹՅԱՆ

Աշակերտներ Քրիստոսի և առաքյալներ ողջ տիեզերքի, որ Տիրոջից պատվեր առաք աներկյուղ քարոզելու կենաց խոսքը աշխարհում, որ արժանի եղաք Աստծո Որդուն մարմնով հայտնապես տեսնելու, բարեխոսեցե՛ք մեր հոգիների փրկության համար: ԱՄԵՆ:

21

ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Տե՛ր Հիսուս Քրիստոս, բա՛ց իմ սրտի աչքերն ու ականջները, որպեսզի լսեմ Քո խոսքերը և կատարեմ Քո կամքը: Հավատում եմ Տեր, որ կլուսավորես իմ սիրտը, որովհետև Դու ողորմած ես: Եվ Քեզ փառք հավիտյանս, հավիտենից: ԱՄԵՆ:

10

ԶՂՋՄԱՆ ԱՂՈԹՔ

Մոլորվածներին դարձի բերող, Տե՛ր, դարձրու ինձ չար սովորություններից բարի սովորության, իմ հոգում բևեռիր սոսկալի օրը մահվան, երկյուղիը գեհենի և սերը արքայության, որպեսզի զղջամ մեղքերս և գործեմ արդարություն: Բխեցրո՛ւ իմ սրտից զղջման արցունքներ, որպեսզի լվանամ մեղքերը անձիս այս աշխարհից ելնելուց առաջ: ԱՄԵՆ:

23

ԱՂՈԹՔ ՃԱՆԱՊԱՐՀԻՑ ԱՌԱՋ

Տե՛ր, երբ ճանապարհ ընկնեմ, ինձ մի՛ թող մենակ, այլ առաքիր իմ առջևից Քո օգնությունը, օր ու գիշեր պահելով ինձ սատանայի բոլոր փորձություններից, և իմ անկայուն մտքին մի՛ թող մեղանչել, այլ զգուշանալ բոլոր մեղքերից : ԱՄԵՆ:

8

ԱՂՈԹՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ

Փրկության Տեր Աստված մեր, որ ողորմած ես ու գթած, համբերատար և բազումողորմ, որ ցավում ես մարդկանց չարիքների համար, որ չես կամենում մեղավորի մահը, այլ նրա դարձը չար ճանապարհից և ապրելը: Տե՛ր, Դու Քո առատ ողորմությամբ մխիթարիր և առիթ տուր ապաշխարության, որպեսզի առողջացած հոգով մտնեն Քո սուրբ եկեղեցին: ԱՄԵՆ:

25

ԱՂՈԹՔ ՃԱՇԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Փա՜ռք Քեզ Տեր, փառք Քեզ, փառաց Թագավոր, որ տվեցիր մեզ ուրախության կերակուր, և Քո ամենաբավ ողորմության լիությամբ լցրեցիր մեր սրտերը: Այժմ լցրո՛ւ մեզ նաև Քո Սուրբ Հոգով, որպեսզի ընդունելի լիննենք Քո առջև և ոչ ամոթահար, քանզի Դու հատուցում ես յուրաքանչյուրին ըստ իր գործերի: ԱՄԵՆ:

6

ԱՂՈԹՔ ՉԱՐ ԱՉՔԻ ԵՎ ՉԱՐ ԼԵԶՎԻ ԴԵՄ

Տե՛ր Աստված, մարդասեր Հոր Որդի, Դու որ օգնական և պահապան ես Քեզ հուսացողներին, գթա՜ Քո արարչական ողորմությամբ, և մեզ, անփորձ ու անսայթաք պահիր սատանայի որոգայթներից: Փրկի՛ր և պահի՛ր Քո ծառայիդ՝ չար աչքից, չար լեզվից և ամենայն երևելի ու աներևույթ դիվական պիղծ հնարքներից: ԱՄԵՆ:

27

ԽԱՂԱՂԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Խաղաղությամբ Քո, Քրիստոս Փրկիչ մեր, որ վեր է ամենայն մտքից, պատսպարի՛ր մեզ ու աներկյուղ պահիր ամենայն չարից: Հավասարեցրու մեզ Քո ճշմարիտ երկրպագուներին, որ հոգով ու ճշմարտությամբ Քեզ են երկրպագում: Քանզի ամենասուրբ Երրորդությանդ վայել է փառք ու պատիվ, այժմ և հավիտյաններում: ԱՄԵՆ:

4

ԱՂՈԹՔ ՀՈԳՈՒ ԱՐԹՆՈՒԹՅԱՆ

Աստված մեր, հիշեցրու իմ զբաղված և մոռացկոտ մտքին Քո ահավոր և սոսկալի դատաստանը, արդարների պատիվն ու փառքը և մեղավորների աններելի տանջանքները. բևեռի՛ր Քո երկյուղով, և զարհուրեցնելով դողացրու իմ մարմինը, որ իմ աչքերի առջև հանապազ տեսնեմ մահը ու պայծառանա՛մ առաքինի վարքով: ԱՄԵՆ:

29

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔ

Գոհանում եմ Քեզանից, Տե՛ր իմ և Աստվա՛ծ իմ և օրհնում ու փառավորում Քո սուրբ Անունը, որ պահեցիր այս գիշեր Քո անարժան և մեղավոր ծառային բոլոր վտանգներից ու փորձություններից, խաղաղությամբ հասցրեցիր առավոտյան ժամին և արժանացրիր տեսնելու Քո ողորմության լույսը: ԱՄԵՆ:

2

ԱՂՈԹՔ ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Աղաչում և խնդրում եմ Քեզանից ով բազմագութ Աստված, մեր ազգի հին և նոր բոլոր հավատքով ու հույսով ի Քեզ ննջածների համար: Հիշի՛ր Քո ողորմությամբ գալստյանդ մեծ Օրը, թողություն շնորհիր նրանց բոլոր մեղքերին ու սխալներին, և դասիր սուրբերիդ հետ Քո աջակողմյան դասում. և Քեզ փառք հավիտյանս հավիտենից: ԱՄԵՆ:

31